

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Հովհաննես Սահակյանի, Վազգեն Կարախանյանի, Արայիկ Հովհաննիսյանի և Ռաֆիկ Գրիգորյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

«Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք՝

1. Նախագծի վերնագիրը խմբագրման կարիք ունի, քանի որ պաշտպանությունը գործունեություն է, և Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ գոյություն

չունի պետական պաշտպանության մասին մեկ միասնական կողմնակցական իրավական ակտ, ուստի, նպատակահարմար չէ պաշտպանության տարանջատումը պետականի և ոչ պետականի: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ պետական պաշտպանությունն իրականացվում է մասնավոր առևտրային գործունեության ձևով, գործունեության տեսակը կոչվում է մասնավոր պահնորդական կամ մասնավոր պահպանության գործունեություն, ընդ որում, թիկնապահական գործունեությունը դիտվում է իբրև պահնորդական գործունեության տարատեսակ՝ թիկնապահների որակավորմանն առաջադրվող ավելի խիստ պահանջներով: Այս իմաստով՝ գտնում ենք, որ օրենքի նախագիծը պետք է վերնագրվի «Մասնավոր պահնորդական գործունեության մասին»:

2. 2-րդ հոդվածում նախատեսված «պաշտպանվող անձ» հասկացությունը խմբագրել՝ նկատի ունենալով այն, որ կարող են լինել դեպքեր, երբ անձը համապատասխան իրավաբանական անձանց հետ պայմանագիր կնքի ոչ միայն իր կյանքի և առողջության պաշտպանության նպատակով, այլև՝ երրորդ անձի, առավել ևս, որ նման հնարավորության մասին խոսվում է օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում:

3. 3-րդ հոդվածից անհրաժեշտ է հանել «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության» բառերը՝ նկատի ունենալով այն, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված չէ թիկնապահական և պահնորդական գործունեության ոլորտը կարգավորող որևէ դրույթ:

4. 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի վերաբերյալ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ իրավակարգի և հանցագործության դեմ պայքարի ապահովման գործում իրավապահ և պետական այլ մարմինների հետ համագործակցությունը չի կարող դիտվել որպես թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունների հիմնական խնդիր:

5. 6-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի և նույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթները կրկնվում են.

2) 8-րդ մասում անհրաժեշտ է «լիցենզիայից զրկելու» բառերը փոխարինել «լիցենզիայի գործողության կասեցման կամ դադարեցման» բառերով՝ նկատի ունենալով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և նույն նախագծի 7-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

6. 7-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունն առաջարկում ենք հանել, նկատի ունենալով այն, որ «լիցենզիա» հասկացությունն արդեն իսկ սահմանված է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով:

7. 9-րդ հոդվածի 1-ին մասում անհրաժեշտ է նախատեսել դրույթներ թիկնապահի կամ պահնորդի կողմից իրավապահ մարմիններին և իր ղեկավարությանը՝ զենք գործադրելու արդյունքում քաղաքացու կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս հասցնելու մասին տեղյակ չլսելու իրավական հետևանքների վերաբերյալ: Նույն դիտողությունը վերաբերում է նախագծի 16-րդ հոդվածի 3-րդ մասին: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

8. 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը խմբագրման կարիք ունի: Մասնավորապես, տվյալ կետում նշվում է, որ, թիկնապահական կամ պահնորդական գործառույթներ իրականացնելիս, թիկնապահը և պահնորդն իրավունք ունեն պահպանվող օբյեկտում, անցագրային ու ներօբյեկտային պայմանակարգերի պայմաններն ապահովելիս, իր իրավասության շրջանակներում, թիկնապահական և պահնորդական ծառայություններ մատուցելու մասին պայմանագրին համապատասխան, իրականացնել քաղաքացիների անձնական խուզարկություն: Այս առնչությամբ հարկ ենք համարում նշել, որ անձնական խուզարկությունը, որպես քննչական գործողություն, նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածում, որտեղ

սահմանվում են նաև դրա իրականացման կարգը և պայմանները: Հետևաբար, թիկնապահներին կամ պահնորդներին նման լիազորություն վերապահելը գտնում ենք ոչ նպատակահարմար: Իսկ եթե նախագծով նախատեսված «անձնական խուզարկություն» հասկացությունն ունի դատավարական օրենքով նախատեսված «անձնական խուզարկություն» հասկացությունից տարբերվող իմաստ, ապա նախընտրելի է նախագծում օգտագործել այլ հասկացություն կամ նախագծի համատեքստում տալ «անձնական խուզարկություն» հասկացության սահմանումը, քանի որ, համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության, եթե նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, ապա այդ իրավական ակտով պետք է տրվեն դրանց սահմանումները:

Նույնը վերաբերում է նաև նախագծի 9-րդ հոդվածում օգտագործված «ձերբակալում» հասկացությանը, որն ամրագրված է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ գլխում:

9. 24-րդ հոդվածի 1-ին մասում «օրենսդրությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «օրենքով» բառով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջների:

10. 26-րդ, 27-րդ և 28-րդ հոդվածներն անհրաժեշտ է հանել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նշված հոդվածների դրույթները սույն օրենքի կարգավորման առարկա չեն, քանի որ ստուգումների հետ կապված հարաբերությունները պետք է կարգավորվեն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

11. Պահնորդական գործունեությունն իր բնույթով առնչվում է հասարակական անվտանգության ապահովման բնագավառին, և, այս նկատառումով, նախագծով պետք է նախատեսված լինեն այնպիսի երաշխիքներ, որոնք առավելագույնս կբացառեն մասնավոր պահնորդական գործունեության ոլորտի քրեականացումը, կոռուպացումը և այլ հնարավոր բացասական դրսևորումները: Նշված նկատառման համար հիմք է հանդիսանում արտասահմանյան մի շարք երկրների մասնավոր պահնորդական գործունեության մասին օրենսդրության կիրառման պրակտիկայի ուսումնասիրությունները. այսպես օրինակ՝ մասնավոր պահնորդական կազմակերպությունների՝ առևտրային այլ գործունեությամբ զբաղվելու իրավունքի սահմանափակումը, պետության տարածքում օտարերկրյա մասնավոր պահնորդական կազմակերպությունների գործունեության արգելքը, մասնավոր պահնորդական կազմակերպության հիմնադրի (մասնակցի)՝ միաժամանակ մասնավոր պահնորդական այլ կազմակերպության հիմնադիր (մասնակից) հանդիսանալու արգելքը: Որոշ երկրներում մասնավոր պահնորդական կազմակերպության գործադիր մարմինների ղեկավարները նույնիսկ պետք է ունենան բարձրագույն կրթություն, իսկ մասնավոր պահնորդական կազմակերպության աշխատողների թիվը չպետք է գերազանցի կազմակերպության պայմանագրային պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ աշխատողների թիվը, միաժամանակ, մասնավոր պահնորդական կազմակերպությունները չեն կարող պահպանության ծառայություններ մատուցել այն անձանց, ում անձի կամ գույքի պահպանությունն ու պաշտպանությունն օրենքով վերապահված է պետական մարմիններին, իսկ խախտումով կնքված պահպանության պայմանագրերն առոչինչ են և այլն: Կարծում ենք, որ օրենքի նախագծում պետք է նախատեսվեն վերը շարադրվածի վերաբերյալ համապատասխան իրավական կարգավորումներ:

12. Նախագծում ամրագրված են դրույթներ, որոնք հոչակագրային բովանդակություն ունեն: Մասնավորապես, նախագծի 20-րդ հոդվածում անհասկանալի է, թե ինչպես են

իրավապահ մարմինները համագործակցելու մասնավոր պահնորդական կազմակերպությունների հետ անվտանգության բնագավառում, եթե այդ կազմակերպությունները չունեն պետական անվտանգության բնագավառին առնչվող իրավագործունակություն, կամ ինչպես է իրականանալու համագործակցությունն իրավակարգի բնագավառում: Հողվածում խոսվում է համաձայնագրի մասին, որի նորմատիվությունն ու պետական ապահովվածությունը երաշխավորված չեն ո՛չ նախագծով և ո՛չ էլ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Անհասկանալի է նաև, թե պետական իշխանության որ մարմիններին կից պետք է ստեղծվեն համակարգող խորհուրդները, ինչ իրավաբանական կարգավիճակ ունի այդ խորհուրդը, այն ինչպես կարող է ազդել մասնավոր պահնորդական կազմակերպությունների վարքագծի վրա և այլն: Գտնում ենք, որ հանցավորության դեմ պայքարի բնագավառում իրավապահ մարմինների և մասնավոր պահնորդական կազմակերպությունների համագործակցության գաղափարը պետք է իր կոնկրետ դրսևորումն ստանա փոխադարձ իրավունքների ու պարտականությունների օրենսդրական ամրագրման եղանակով, որոնց անտեսումը, օրինակ՝ մասնավոր պահնորդական կազմակերպությունների նկատմամբ առաջ կրելի «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ներգործության միջոցների կիրառում:

13. Նախագծում բացակայում են մասնավոր պահնորդական կազմակերպությունների պատասխանատվության վերաբերյալ դրույթները, մասնավորապես, պարզ չէ, թե ինչ իրավական հետևանքների կարող է հանգեցնել նախագծի 10-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները չպահպանելը, արդյոք այդ սահմանափակումների խախտումները համապատասխանում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված խախտումների հատկանիշներին: Եթե համապատասխանում են, ապա դրանք լիցենզիայի

գործողության կասեցման թե դադարեցման հիմքեր են: Գտնում ենք, որ նախագծով պետք է հստակ ամրագրվեն լիցենզիայի գործողության կասեցման և դադարեցման հիմքերը: Նման հստակեցումը կբարձրացնի պետական վերահսկողության արդյունավետությունը և կնվազեցնի կոռումպցիոն ռիսկերը:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունենք:

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք՝

«Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է պահնորդների և թիկնապահների որակավորում, ուստի, անհրաժեշտ է նախագծով նախատեսված լրացման 7-րդ պունակը լրացնել «Ո» տառով, իսկ 10-րդ պունակից հանել «ե» տառը, քանի որ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով այդպիսի տառ սահմանված չէ:

Օրինագծերի փաթեթը չի ներառում թիկնապահների և պահնորդների վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի նախագիծ՝ այդ հարաբերությունը թողնելով գործող ընթացիկ օրենսդրության կարգավորմանը: Կարծում ենք, որ այդպիսի մոտեցումը նվազեցնում է օրենքի նախագծի պետական ապահովվածությունը և կարգավորման ոլորտում կարգապահության մակարդակը: Գտնում ենք, որ վարչական կարգով պետք է պատժելի լինեն մասնավոր պահնորդական կազմակերպությունների կողմից անօրինական պահնորդական ծառայություններ առաջարկելը, ինչպես նաև՝ անօրինական պահնորդական ծառայություններից օգտվելը: Բացի դրանից, ապօրինի ձեռնարկատիրությունը մասնավոր պահնորդական գործունեության ոլորտում պետք է պատժվի քրեորեն, այդ նպատակով՝ պահնորդական գործունեություն իրականացնելու համար պետական տուրքը պետք է

սահմանել 500 000 դրամ, հակառակ պարագայում՝ ապօրինի ձեռնարկատիրությունը հանգեցնելու է վարչական տուգանքի նշանակման՝ ընդամենը 15-30 հազ. դրամ, ինչը բավարար չէ ոլորտում հնարավոր իրավախախտումների կանխարգելման համար, ավելին՝ կսահմանափակի ոստիկանության հնարավորություններն ապացուցման գործընթացում:

«Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն անցումային դրույթներ չի պարունակում: Նախատեսվում է, որ թիկնապահներն ու պահնորդները համապատասխան որակավորում պետք է ստանան լիցենզավորված ուսումնական հաստատություններում, սակայն անհրաժեշտ մասնագիտությունների նախատեսումը և ուսումնական հաստատությունների լիցենզավորումը կպահանջեն որոշակի ժամանակ: Անցումային դրույթների բացակայությամբ, օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, օրինական հիմունքներով գործող պահնորդական կազմակերպությունները կգրկվեն ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հնարավորությունից՝ դրանից բխող բացասական հետևանքներով: Ուստի, նախագիծը պետք է լրացվի անցումային դրույթներով, որն իրավական հատուկ ռեժիմ կնախատեսի այս պահին գործող պահնորդական կազմակերպությունների համար:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը լրամշակման կարիք ունի և այն ընդունելի կլինի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պահպանության համակարգի զարգացման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրի 2-րդ կետի համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում

մշակվել է «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որն այժմ գտնվում է քննարկման փուլում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատրաստակամ է համագործակցել նախագծերի փաթեթի հեղինակների հետ՝ նախագծերի փաթեթի լրամշակման հարցում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալ Արթուր Օսիկյանը:

Օրենքների նախագծերի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության և այլ իրավական ակտերը կընդունվեն օրենքի ընդունումից հետո եռամսյա ժամկետում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատականները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

«Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործունեւն պարունակում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին», «Պետական տուրքի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և
«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի
ընդունման դեպքում

«Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին», «Պետական տուրքի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և
«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունումը
առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին», «Պետական տուրքի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և
«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների (այսուհետ՝
Նախագծեր)՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության
գնահատման վերաբերյալ

Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության
գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010
թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական
պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման
կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերը սոցիալական պաշտպանության ոլորտում ունեն չեզոք
ազդեցություն՝ ինչպես ռազմավարական, այնպես էլ շահառուների վրա ունեցած
կարգավորման ազդեցության տեսանկյունից:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին ՀՀ օրենքի և դրան առնչվող «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ու «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը և/կամ չընդունումը բյուջետային բնագավառում թե մուտքերի և թե ելքերի գծով կարգավորման ազդեցության չի հանգեցնում:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է ոչ պետական պաշտպանության գործունեության ծառայությունների մատուցման համար սահմանել տարեկան պետական տուրք՝ բազային տուրքի 250-ապատիկի չափով:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ ներկայացված նախագծի ընդունումը ենթադրում է ՀՀ պետական բյուջեի եկամուտների ավելացում:

Միաժամանակ, հաշվի առնելով ոչ պետական պաշտպանության գործունեության ծառայություններ մատուցողների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատում հնարավոր չէ իրականացնել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին ՀՀ օրենքի և դրան առնչվող «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ու «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) կարգավորվում են ոչ պետական պաշտպանական գործունեության, մասնավորապես՝ թիկնապահական և պահնորդական գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:

Նախագծերի մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝ որ Նախագծերով կարգավորվող շրջանակները առնչվում են թիկնապահական և պահնորդական ծառայությունների շուկաների հետ:

Ազդեցության գնահատման բուն գործընթացի փուլում առանցքային ուղղություններով կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Նախագծերի ընդունմամբ առաջանում է համապատասխան ապրանքային շուկայում մատակարարների քանակի սահմանափակման խնդիր, քանի որ նախատեսվում է ոչ պետական պաշտպանական գործունեության լիցենզավորում՝ բարդ ընթացակարգով: Սակայն հաշվի առնելով թիկնապահական և պահնորդական գործունեության առանձնահատուկ բնույթով պայմանավորված տվյալ շուկայի կարգավորման անհրաժեշտությունը, լիցենզավորման համար սահմանված պետական տուրքի ոչ մեծ գումարը՝ Նախագծի ազդեցությունը մրցակցության միջավայրի վրա զգալի չի լինի:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ արձանագրվել է Նախագծերի ընդունմամբ տվյալ ապրանքային շուկայում մրցակցության միջավայրի վրա ոչ զգալի բացասական ազդեցություն հայտնաբերվելու եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին ՀՀ օրենքի և դրան առնչվող «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ու «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա բացասական ազդեցություն է նախատեսվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծով նախատեսվում է թիկնապահական և պահնորդական գործունեության իրականացման համար պարտադիր սահմանել լիցենզավորման կարգ, ինչպես նաև վերոնշյալ գործունեության ծառայություններ մատուցելու համար տարեկան պետական տուրք բազային տուրքի 250-ապատիկի չափով: Վերոնշյալ փոփոխությունների արդյունքում նմանատիպ գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձանց համար կառաջանան լրացուցիչ ծախսեր, որն էլ իր հերթին կբերի վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների գների թանկացման:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ****Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին**

Սույն օրենքը սահմանում է ոչ պետական պաշտպանության գործունեության իրավական հիմքերը, սկզբունքները, խնդիրները, պետական եւ այլ մարմինների հետ համագործակցության կարգը, կարգավորում է այդ գործունեության իրականացման ընթացքում ծագող հարաբերությունները:

ՀՈՂՎԱԾ 1. ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող թիկնապահական եւ պահնորդական գործունեության վրա:
2. Հայաստանի Հանրապետության տարածքում թիկնապահական եւ պահնորդական գործունեությամբ զբաղվելու իրավունք ունեն միայն սույն օրենքով սահմանված կարգով լիցենզիա ստացած իրավաբանական անձինք:

ՀՈՂՎԱԾ 2. ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

ոչ պետական պաշտպանություն՝ ոչ պետական կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձանց կողմից սույն օրենքով սահմանված թիկնապահական եւ (կամ) պահնորդական գործունեության իրականացում.

թիկնապահական եւ պահնորդական գործունեություն՝ լիցենզավորման ենթակա գործունեություն, որն իրականացվում է պայմանագրային (վճարովի) հիմունքներով, ոչ պետական կազմակերպության կողմից՝ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց թիկնապահական եւ պահնորդական ծառայություններ մատուցելու նպատակով.

թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպություն՝ թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնելու լիցենզիա ստացած ոչ պետական կազմակերպություն.

թիկնապահ՝ պաշտպանվող անձի կյանքի եւ առողջության պաշտպանություն իրականացնելու համար սույն օրենքով նախատեսված որակավորում ունեցող, թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունում պայմանագրային հիմունքներով աշխատող եւ կանոնադրական խնդիրներ իրականացնող ֆիզիկական անձ,

պահնորդ՝ պահպանվող օբյեկտների մշտական եւ ժամանակավոր գտնվելու վայրերի շենքերի, շինությունների, կառույցների, դրանց հարող տարածքների, տրանսպորտային միջոցների պաշտպանություն իրականացնելու համար սույն օրենքով նախատեսված որակավորում ունեցող, թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունում պայմանագրային հիմունքներով աշխատող եւ կանոնադրական խնդիրներ իրականացնող ֆիզիկական անձ.

պաշտպանվող անձ՝ թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող ոչ պետական կազմակերպության հետ իր կյանքի եւ առողջության պաշտպանություն իրականացնելու վերաբերյալ վճարովի հիմունքներով պայմանագիր կնքած ֆիզիկական անձ.

պահպանվող օբյեկտ՝ թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության եւ պատվիրատուի միջեւ կնքված պայմանագրի համաձայն պահպանության ենթակա գույք (տարածք).

թիկնապահական եւ պահնորդական ծառայություններ՝ պաշտպանվող անձանց եւ պահպանվող օբյեկտների պաշտպանությունն ու անվտանգությունն ապահովող գործողությունների ամբողջություն.

անցագրային պայմանակարգ՝ պահպանվող օբյեկտ մուտքի եւ ելքի համար սահմանված կարգ, որն ապահովում է անձանց եւ տրանսպորտային միջոցների վերահսկելի մուտքը եւ ելքը պահպանվող օբյեկտ.

ներօբյեկտային պայմանակարգ՝ պահպանվող օբյեկտի ներսում անվտանգության ապահովման կարգ եւ դրա իրականացմանն ուղղված միջոցառումների ամբողջություն:

ՀՈՂՎԱԾ 3. ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆԱՅՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Թիկնապահական եւ պահնորդական գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, սույն օրենքի, այլ օրենքների եւ իրավական ակտերի հիման վրա:
2. Եթե վավերացված միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերով սահմանված նորմերը:

ՀՈՂՎԱԾ 4. ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐԸ

1. Թիկնապահական եւ պահնորդական գործունեությունն իրականացվում է օրինականության, օրենքի առջեւ բոլորի հավասարության, մարդու եւ քաղաքացու իրավունքները, ազատություններն ու արժանապատվությունը, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքները եւ օրինական շահերը հարգելու, պաշտպանվող ֆիզիկական անձի ու պահպանվող օբյեկտի պաշտպանությունը հուսալի եւ անվտանգ եղանակով իրականացնելու սկզբունքների հիման վրա:

ՀՈՂՎԱԾ 5. ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Թիկնապահական եւ պահնորդական գործունեության հիմնական խնդիրներն են՝
 - 1) ֆիզիկական անձանց (նրանց կողմից պայմանագրում նշված անձանց) կյանքի եւ առողջության պաշտպանության նպատակով թիկնապահական ծառայությունների մատուցումը.

2) իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի (ներանց կողմից պայմանագրում նշված անձանց) գույքի, գույքային իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության նպատակով պահնորդական ծառայությունների մատուցումը.

3) պահպանվող օբյեկտներում՝ սահմանված անցագրային եւ ներօբյեկտային պայմանակարգերի ապահովումը.

4) իրավակարգի եւ հանցագործության դեմ պայքարի ապահովման գործում իրավապահ եւ պետական այլ մարմինների հետ համագործակցությունը:

ՀՈՂՎԱԾ 6. ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

1. Թիկնապահական եւ պահնորդական գործունեությունն իրականացվում է տվյալ գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձանց կողմից՝ սույն օրենքով նախատեսված թիկնապահական եւ պահնորդական ծառայություններ մատուցելու միջոցով:

2. Թիկնապահական եւ պահնորդական գործունեությունն իրականացնելիս կարող են մատուցվել հետեւյալ ծառայությունները՝

1) ֆիզիկական անձի կյանքի եւ առողջության պաշտպանությունը՝ հակաիրավական ոտնձգություններից, այդ թվում՝ զենքի օգտագործմամբ.

2) սեփականության կամ օրինական տիրապետման ներքո գտնվող օբյեկտների, անշարժ եւ շարժական գույքի, տարածքի պահպանությունը.

3) պահպանվող օբյեկտներում անցագրային եւ ներօբյեկտային պայմանակարգերի ապահովումը.

4) հատուկ կապի եւ տրանսպորտային միջոցների տրամադրումը:

3. Թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը պայմանագրով նախատեսված դեպքերում կարող է իրականացնել նաեւ սպասարկում՝ հատուկ կապով եւ տրանսպորտային միջոցով:

4. Պաշտպանվող յուրաքանչյուր անձի կարող է ուղեկցել՝ միայն մեկ տրանսպորտային միջոց եւ երեքից ոչ ավելի թիկնապահ (այդ թվում՝ վարորդ- թիկնապահը):

5. Թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունն իրավունք չունի մատուցել թիկնապահական կամ պահնորդական ծառայություն պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց:

6. Թիկնապահական եւ պահնորդական ծառայություններ մատուցելիս թիկնապահները (պահնորդները) պետք է կրեն միասնական համազգեստ՝ միայն աշխատանքային ժամերին, որոնք պետք է տարբերվեն հատուկ պետական պաշտպանություն իրականացնող մարմնի աշխատողների համազգեստից:

Միասնական համազգեստի եւ տարբերանշանի նկարագիրը հաստատում է թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը:

7. Թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության ղեկավարները, թիկնապահները եւ պահնորդներն իրավունք չունեն պաշտոններ զբաղեցնել կամ աշխատել այն պաշտպանվող անձանց մոտ կամ պահպանվող օբյեկտներում, որոնց հետ թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը կնքել է ծառայություններ մատուցելու պայմանագիր:

8. Սույն հոդվածի պահանջների չկատարումը հիմք է հանդիսանում տվյալ կազմակերպությանը թիկնապահական եւ պահնորդական գործունեության լիցենզիայից զրկելու համար:

ՀՈՂՎԱԾ 7. ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

1. Թիկնապահական եւ պահնորդական գործունեության լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն օրենքով նախատեսված առանձնահատկությունները:

2. Իրավաբանական անձինք իրավասու են զբաղվելու թիկնապահական եւ պահնորդական գործունեությամբ միայն լիցենզիայի առկայության դեպքում: Իրավաբանական անձի մոտ թիկնապահական եւ պահնորդական գործունեության լիցենզիայի առկայությունը հաստատվում է լիցենզավորող մարմնի կողմից տրված տվյալ գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթղթով:

3. Թիկնապահական եւ պահնորդական գործունեության համար տրվում է բարդ ընթացակարգով լիցենզիա:

4. Թիկնապահական եւ պահնորդական գործունեությամբ զբաղվելու լիցենզիան տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից:

5. Թիկնապահական եւ պահնորդական գործունեության լիցենզավորման, այդ թվում՝ լիցենզիայի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, վերածեակերպման, լիցենզիայի գործողության կասեցման կամ դադարեցման եւ այլ ընթացակարգերն իրականացվում են օրենքով սահմանված կարգով:

ՀՈՂՎԱԾ 8. ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1. Թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության եւ պատվիրատուի միջեւ սույն օրենքով նախատեսված թիկնապահական եւ պահնորդական ծառայություններ մատուցելու մասին պայմանագիրը կնքվում է գրավոր, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով՝ սույն օրենքի պահանջներին համապատասխան:

2. Թիկնապահական եւ պահնորդական ծառայությունների մատուցման մասին կնքված պայմանագիրը, դրա կատարման հետ կապված տեղեկություններ պարունակող փաստաթղթերը եւ նյութերը ենթակա են պահպանման հինգ տարի ժամկետով՝

թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունում:

ՀՈՂՎԱԾ 9. ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Թիկնապահական եւ պահնորդական ծառայություններ մատուցելու ընթացքում արձանագրված իրավախախտման կամ իրավախախտումը կանխելու կամ իրավախախտին ձեռքակալելու ընթացքում ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ կամ զենք գործադրելիս քաղաքացու կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս հասցնելու դեպքում թիկնապահը կամ պահնորդը պարտավոր է անհապաղ տեղյակ պահել իրավապահ մարմիններին եւ իր ղեկավարությանը:

2. Իրավախախտման ընթացքում հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում թիկնապահը կամ պահնորդը պարտավոր է մինչեւ իրավապահ մարմինների աշխատակիցների ժամանումը հնարավոր միջոցներ ձեռնարկել հանցագործության դեպքի վայրի եւ հետքերի պահպանման ուղղությամբ, բացահայտի դեպքի ականատեսներին՝ արձանագրելով նրանց տվյալները:

3. Արձանագրված իրավախախտման եւ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ փաստաթղթերը ենթակա են պահպանման հինգ տարի ժամկետով՝ թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունում:

ՀՈՂՎԱԾ 10. ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնելիս արգելվում է՝

- 1) թաքցնել նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործության փաստերը՝ անկախ պատվիրատուի շահերից.
- 2) իրականացնել իրավապահ մարմինների կամ պետական այլ մարմինների պաշտոնատար անձանց լիազորություններ.
- 3) խոչընդոտել իրավապահ մարմինների, այդ թվում՝ մաքսային, հարկային, անվտանգության ծառայության, ինչպես նաեւ այլ պետական մարմինների աշխատակիցների գործունեությանը.
- 4) օգտագործել եւ տարածել պաշտպանվող անձի վերաբերյալ իրեն հայտնի դարձած տեղեկությունները.
- 5) այլ անձանց փոխանցել իրեն ամրակցված զենքը, հատուկ կամ տեխնիկական միջոցները եւ սահմանված կարգով ստացած վկայականը.
- 6) պետական ռազմականացված կամ իրավապահ մարմինների տարբերանշաններով համազգեստի կրումը:

ՀՈՂՎԱԾ 11. ԹԻԿՆԱՊԱՀԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

1. Թիկնապահը եւ պահնորդն աշխատում են աշխատանքային պայմանագրի հիման վրա եւ նրանց վրա տարածվում են աշխատանքային օրենսդրության պահանջները:

2. Թիկնապահի եւ պահնորդի աշխատանքին հավակնող անձը, աշխատանքային պայմանագիր կնքելիս աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերի հետ մեկտեղ պարտավոր է ներկայացնել իր կողմից հատուկ պատրաստություն (որակավորում) անցնելը հավաստող փաստաթուղթ:

3. Թիկնապահի եւ պահնորդի կարգավիճակ ձեռք բերելու եւ թիկնապահական եւ պահնորդական գործառույթներ իրականացնելու (այդ թվում՝ զենքի օգտագործմամբ եւ հատուկ միջոցների գործադրմամբ) իրավունք ունեն 25 տարին լրացած Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն թիկնապահի կամ պահնորդի որակավորում:

4. Թիկնապահի եւ պահնորդի կարգավիճակ ձեռք բերելու եւ թիկնապահական եւ պահնորդական գործառույթ իրականացնելու իրավունք չունեն այն անձինք, ովքեր՝

- 1) դատական կարգով ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- 2) հոգեկան հիվանդության, հարբեցողության կամ թմրամոլության պատճառով հաշվառման են կանգնած բուժփիմնարկներում.
- 3) դատապարտվել են դիտավորյալ հանցագործության համար եւ դատվածությունը սահմանված կարգով մարված կամ հանված չէ.
- 4) խուսափել են ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից:

ՀՈԴՎԱԾ 12. ԹԻԿՆԱՊԱՀԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Թիկնապահական կամ պահնորդական գործառույթներ իրականացնելիս թիկնապահը եւ պահնորդը իրավունք ունեն՝

- 1) պահպանվող օբյեկտի տարածքում գտնվող անձանցից պահանջել անցագրային ու ներօբյեկտային պայմանակարգերի պահանջների պահպանում.
- 2) պահպանվող օբյեկտում անցագրային ու ներօբյեկտային պայմանակարգերի պայմաններն ապահովելիս, իր իրավասության շրջանակներում, թիկնապահական եւ պահնորդական ծառայություններ մատուցելու մասին պայմանագրին համապատասխան, իրականացնել քաղաքացիների անձնական խուզարկություն, նրանց մոտ գտնվող առարկաների զննում, անձը հաստատող, ինչպես նաեւ պահպանվող օբյեկտ հետիոտն կամ տրանսպորտային միջոցով մուտքի եւ ելքի, գույք տեղափոխելու փաստաթղթերի ուսումնասիրություն.
- 3) վնասազերծել պաշտպանվող անձի կամ պահպանվող օբյեկտի, ինչպես նաեւ իր նկատմամբ ոտնձգություն կատարած անձին եւ վերջինիս հանձնել իրավապահ մարմիններին.
- 4) իրականացնել պահպանվող օբյեկտի տարծք մտնող եւ դուրս եկող տրանսպորտային միջոցների զննում,
- 5) սույն օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով կիրառել ֆիզիկական ուժ, զենք, հատուկ կամ տեխնիկական միջոցներ:

2. Թիկնապահի կամ պահնորդի կողմից ֆիզիկական եւ իրավաբանական անձանց օրինական իրավունքների եւ ազատությունների խախտումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

ՀՈՂՎԱԾ 13. ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ ԶԵՆՔ ԶԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԼԻՑԵՆԶԻԱՆ, ԶԵՆՔ ՀԱՏՈՒԿ ԿԱՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԿՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՐՎՈՂ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպություններին թույլատրվում է ձեռք բերել միայն «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված քաղաքացիական կամ ծառայողական զենք:
2. Ոչ պետական կազմակերպություններին զենք ձեռք բերելու լիցենզիայի, զենք պահելու եւ կրելու թույլտվության տրամադրումը, ինչպես նաեւ այդ զենքի գրանցումն իրականացվում է «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց համար նախատեսված պայմաններով ու կարգով:
3. Թիկնապահներին եւ պահնորդներին զենքը տրվում է իրավաբանական անձի ղեկավարի գրավոր հրամանով, եթե այդ աշխատողներն անցել են հատուկ պատրաստություն եւ լիազոր մարմնից ստացել են զենք պահելու եւ կրելու թույլտվություն:
4. Թիկնապահական եւ պահնորդական գործունեության ընթացքում կիրառման ենթակա հատուկ կամ տեխնիկական միջոցների տեսակները, դրանց ձեռքբերման, գործադրման ու հաշվառման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
5. Թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնելիս հատուկ կամ տեխնիկական միջոցներն օգտագործվում են սույն օրենքով սահմանված կարգով եւ դեպքերում:

ՀՈՂՎԱԾ 14. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒԺ, ԶԵՆՔ, ՀԱՏՈՒԿ ԿԱՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

1. Իր լիազորություններն իրականացնելիս թիկնապահը կամ պահնորդը ֆիզիկական ուժ, զենք, հատուկ կամ տեխնիկական միջոցներ գործադրելու իրավունք ունի միայն ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում, ինչպես նաեւ ոտնձգություն կատարած անձին վնասազերծելիս՝ ելնելով ստեղծված իրավիճակից, իրավախախտման բնույթից եւ իրավախախտի անձից՝ ղեկավարվելով պահպանվող օբյեկտի ու ֆիզիկական անձի պաշտպանությունն առավել հուսալի եւ անվտանգ եղանակով իրականացնելու սկզբունքով:
2. Ֆիզիկական ուժ, զենք, հատուկ կամ տեխնիկական միջոցներ գործադրելիս թիկնապահը կամ պահնորդը պարտավոր է՝
 - 1) դրանք օգտագործելուց առաջ նախազգուշացնել՝ անձին բավարար ժամանակ տրամադրելով իր պահանջների կատարման եւ ոտնձգությունը դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ հապաղումն անմիջական վտանգ է ստեղծում պաշտպանվող անձի, պահպանվող օբյեկտի կամ պահպանական միջոցառումների անցկացմանը ներգրավված մյուս անձանց կյանքի կամ առողջության համար, կամ երբ ստեղծված իրադրությունում նման նախազգուշացումն անհնար է.

2) ելնելով ոսնձգության բնույթից՝ ձգտել, որպեսզի ոսնձգություն կատարած անձին հասցվի նվազագույն վնաս:

3) մարմնական վնասվածքներ ստացած անձանց ցույց տալ առաջնային բուժօգնություն:

4) ֆիզիկական ուժի, զենքի, հատուկ կամ տեխնիկական միջոցների գործադրմամբ անձի առողջությանը վնաս պատճառելու կամ մահվան դեպքում անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնի տվյալ վայրի ստորաբաժանմանը եւ իր ղեկավարին:

3. Թիկնապահը եւ պահնորդը պատասխանատվություն չեն կրում սույն օրենքով նախատեսված դեպքերում գործադրված ֆիզիկական ուժի, զենքի, հատուկ կամ տեխնիկական միջոցների գործադրման համար, եթե տվյալ դեպքում չի կատարվել անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության սահմանների անցում կամ հանցագործություն կատարած անձի ձերբակալման համար անհրաժեշտ միջոցառումների գերազանցում:

4. Լիազորությունների գերազանցմամբ ֆիզիկական ուժի, զենքի, հատուկ կամ տեխնիկական միջոցների գործադրումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

ՀՈՂՎԱԾ 15. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒՑԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ

1. Թիկնապահը կամ պահնորդն իրավունք ունի ֆիզիկական ուժ (այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ) գործադրել պաշտպանվող անձի կամ պահպանվող օբյեկտի նկատմամբ ոսնձգությունը կանխելիս, դրանք կատարած անձանց վնասազերծելիս, ինքնապաշտպանության, ինչպես նաեւ այն դեպքերում, երբ առանց ֆիզիկական ուժ գործադրելու չի ապահովվի իր պարտականությունների օրինական եւ իրավաչափ կատարումը:

ՀՈՂՎԱԾ 16. ԶԵՆՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1. Թիկնապահը կամ պահնորդը, որպես ծայրահեղ միջոց, իրավունք ունի զենք օգտագործել՝

1) անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում՝ իր կամ պաշտպանվող անձի կամ պահպանվող օբյեկտի վրա կատարվող վտանգավոր, խմբակային կամ այլ զինված հարձակումը կանխելիս, եթե զենք չկիրառելը կարող է անմիջական վտանգ ստեղծել նրա, պաշտպանվող անձի կյանքի առողջության կամ պահպանվող օբյեկտի համար:

2) պաշտպանվող անձի կյանքին եւ առողջությանը վտանգ սպառնացող հարձակումը կամ հարձակման սպառնալիքը կանխելիս:

3) պահպանվող օբյեկտ մուտք գործելու փորձ կատարող տրանսպորտային միջոցը վնասելով կանգնեցնելիս, եթե վարորդն իրական վտանգ է ստեղծում պաշտպանվող անձանց կամ պահպանվող օբյեկտների համար եւ չի ենթարկվում թիկնապահի կամ պահնորդի՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու հրահանգներին:

4) թիկնապահի կամ պահնորդի զենքին տիրանալու փորձը կանխելիս,

5) զենք օգտագործելու մտադրության մասին նախազգուշական կրակոց արձակելիս, տազնապ հայտարարելիս կամ օգնության կանչելիս:

6) պահպանվող օբյեկտների եւ տրանսպորտային միջոցների վրա հարձակմանը կամ հարձակման սպառնալիքին դիմակայելիս.

2. Արգելվում է զենքի օգտագործումը հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամների եւ անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու, թիկնապահի կամ պաշտպանվող անձի կյանքին եւ առողջությանը, պահպանվող օբյեկտի անվտանգությանը սպառնացող զինված կամ խմբակային այլ հարձակումը կանխելու դեպքերի:

3. Ձենքի օգտագործման յուրաքանչյուր դեպքում թիկնապահը կամ պահնորդը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնի՝ տվյալ վայրի ստորաբաժանմանը եւ իր անմիջական ղեկավարին:

4. Թիկնապահական եւ պահնորդական ծառայություններ մատուցելիս օգտագործվող զենքի տեսակը, ձեւը, մոդելը եւ քանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Մերկացրած զենքով պաշտպանվող անձին կամ պահպանվող օբյեկտին մոտենալու, ցանկացած փորձ թիկնապահին կամ պահնորդին իրավունք է տալիս առանց նախազգուշացման՝ զենք օգտագործել օրենքով սահմանված կարգով:

ՀՈՂՎԱԾ 17. ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ

1. Թիկնապահը եւ պահնորդը հատուկ միջոցներ կարող է գործադրել հետեւյալ դեպքերում.

1) պաշտպանվող անձի կամ իր կյանքին եւ առողջությանն անմիջականորեն սպառնացող հարձակումը խափանելիս.

2) պահպանվող օբյեկտի եւ տրանսպորտային միջոցների վրա հարձակմանը կամ հարձակման վտանգին դիմակայելիս.

3) պահպանվող օբյեկտ մուտք գործելու փորձ կատարող տրանսպորտային միջոցը կանգնեցնելու անհրաժեշտությունից ելնելով, եթե վարորդը չի կատարում մեքենան կանգնեցնելու վերաբերյալ պահնորդի օրինական պահանջը (հրահանգը).

4) թիկնապահի կամ պահնորդի հատուկ միջոցներին տիրանալու փորձը կանխելիս:

2. Թիկնապահը կարող է գործադրել հետեւյալ հատուկ միջոցները՝

1) ձեռնաշղթաներ, արցունքաբեր գազ, ռետինե մահակներ, էլեկտրահարող սարքեր, կայծային պարպիչներ, ծառայողական շներ՝ սույն հոդվածով առաջին մասի 1-ին, 2-րդ եւ 4-րդ կետերով նախատեսված դեպքերում.

2) տրանսպորտի հարկադիր կանգնեցման միջոցներ՝ սույն հոդվածի առաջին մասի 3-րդ կետով նախատեսված դեպքում:

3. Արգելվում է հատուկ միջոցների գործադրումը հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, ակնհայտ հաշմանդամների եւ անչափահասների նկատմամբ, եթե նրանց տարիքն ակնհայտ է կամ հայտնի է թիկնապահին կամ պահնորդին:

4. Անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում, հատուկ միջոցների կամ զենքի բացակայության դեպքում, թիկնապահն իրավունք ունի օգտագործել այդ նպատակի համար պիտանի հնարավոր բոլոր միջոցները:

ՀՈԴՎԱԾ 18. ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

1. Թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնելիս տեխնիկական միջոցների կիրառումը չպետք է խախտի այլ անձանց օրինական իրավունքներն ու ազատությունները, վնաս հասցնի նրանց կյանքին եւ առողջությանը, շրջակա միջավայրին:

2. Թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնելիս թույլատրվում է օգտագործել ռադիոհաճախականության տիրույթներ, որոնց տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՈԴՎԱԾ 19. ԹԻԿՆԱՊԱՀԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՅՈՒՄԸ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ, ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

1. Թիկնապահի եւ պահնորդի մասնագիտական ուսուցումը, վերապատրաստումը, որակավորումը եւ որակավորման բարձրացումն իրականացնում են իրավաբանական անձ հանդիսացող եւ կրթական գործունեության լիցենզիա ունեցող հաստատությունները:

2. Թիկնապահի եւ պահնորդի որակավորման ստուգման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Թիկնապահները եւ պահնորդներն առնվազն երեք տարին մեկ անգամ պարտավոր են անցնել պարտադիր վերապատրաստում, որի կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՈԴՎԱԾ 20. ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎԱՊԱՀ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱՎԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Իրավապահ մարմինների հետ համագործակցության ընթացքում թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունների աշխատանքներն իրականացվում են հետեւյալ հիմնական ուղղություններով.

- 1) պետության անվտանգության ապահովում.
- 2) իրավակարգի պահպանում.
- 3) քաղաքացիների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության ապահովում.
- 4) հետախուզման մեջ գտնվող անձանց հայտնաբերում:

2. Իրավապահ մարմինների հետ համագործակցությունն իրականացվում է համաձայնագրերի հիման վրա՝ տեղեկատվության փոխանակման, օրենսդրությամբ նախատեսված համատեղ կամ համաձայնեցված միջոցառումների անցկացման միջոցով:

3. Իրավապահ մարմինների եւ թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ պետության անվտանգությունն

ապահովելու, իրավակարգի պահպանման եւ հանցագործության դեմ պայքարի հարցերով համագործակցության նպատակով պետական իշխանության մարմիններին կից կարող են ստեղծվել համակարգող խորհուրդներ:

4. Իր իրավասության շրջանակներում Լիազոր մարմինը կազմակերպում է անվտանգության ապահովման պետական մարմինների հետ համագործակցությունը եւ համակարգում է նրանց գործունեությունը պետական պահպանության ոլորտում:

5. Արտակարգ իրավիճակներում թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունն իրավապահ մարմինների նախաձեռնությամբ կարող է ներգրավվել համապատասխան միջոցառումների իրականացմանը՝ ծառայությունների մատուցման մասին պայմանագրին համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 21. ԹԻԿՆԱՊԱՀԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

1. Աշխատանքային պայմանագրով աշխատող թիկնապահի եւ պահնորդի կյանքը եւ առողջությունը, կապված ծառայողական պարտականությունների կատարման հետ, ենթակա են ապահովագրման գործատուի միջոցների հաշվին:

ՀՈՂՎԱԾ 22. ԹԻԿՆԱՊԱՀԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

1. Թիկնապահը եւ պահնորդը չեն կարող հետապնդվել եւ պատասխանատվության ենթարկվել օրենքով սահմանված իրենց պարտականությունների եւ գործողությունների կատարման համար:

2. Թիկնապահական եւ պահնորդական ծառայություններ մատուցող անձանց նկատմամբ իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս դիմադրություն ցույց տալը, սպառնալիքը կամ բռնությունն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

ՀՈՂՎԱԾ 23. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԹԻԿՆԱՊԱՀԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

1. Սույն օրենքով նախատեսված թիկնապահի եւ պահնորդի սոցիալական եւ իրավական պաշտպանության երաշխիքները չպահպանելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

ՀՈՂՎԱԾ 24. ԹԻԿՆԱՊԱՀԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Թիկնապահը կամ պահնորդն իրենց պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու եւ սույն օրենքով սահմանված լիազորությունների սահմանն անցնելու դեպքերում ենթարկվում է պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Թիկնապահի կամ պահնորդի անօրինական գործողության կամ անգործության

հետեանքով կազմակերպություններին եւ քաղաքացիներին պատճառված վնասը ենթակա է փոխհատուցման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությանը համապատասխան:

3. Թիկնապահի կամ պահնորդի անօրինական գործողությունները կարող են բողոքարկվել վերադասության կարգով կամ դատական կարգով:

ՀՈՂՎԱԾ. 25 ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

1. Թիկնապահական եւ պահնորդական գործունեության օրինականության նկատմամբ հսկողություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը սույն օրենքով սահմանած կարգով:

2. Թիկնապահական կամ պահնորդական այլ գործունեության օրինականության նկատմամբ պետական մյուս մարմինները հսկողություն կամ վերահսկողություն կարող են իրականացնել միայն օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում, պայմաններով եւ կարգով՝ ստուգումներ կատարելուց առնվազն երեք օր առաջ այդ մասին գրավոր հայտնելով լիազոր մարմինն եւ թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության ղեկավարությանը:

Պետական մյուս մարմինների կողմից թիկնապահական կամ պահնորդական այլ գործունեության օրինականության նկատմամբ կատարված ստուգման արձանագրության պատճենը ներկայացվում է լիազոր մարմինն ու թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության ղեկավարությանը՝ արձանագրությունը կազմելուց հետո՝ հինգ օրվա ընթացքում:

3. Ստուգումների ընթացքում արգելվում է թիկնապահական եւ պահնորդական գործունեությանը խոչնդոտելը:

ՀՈՂՎԱԾ. 26 ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

1. Թիկնապահական կամ պահնորդական գործունեության օրինականության նկատմամբ ստուգումն իրականացվում է տարեկան եւ ընթացիկ:

3. Տարեկան ստուգումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանապետի կողմից հաստատված թիկնապահական եւ պահնորդական գործունեության ստուգումների տարեկան ծրագրերով՝ նախատեսված ժամկետներում: Ստուգումների տարեկան ծրագիրը հաստատվելուց հետո տասնօրյա ժամկետում ուղարկվում է թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպություններին:

4. Ընթացիկ ստուգումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանապետի կամ թիկնապահական եւ պահնորդական գործունեության բնագավառը համակարգող պաշտոնատար անձի՝ նախաձեռնությամբ՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից թիկնապահի կամ պահնորդի գործողությունների բողոքարկման դեպքում: Ընթացիկ ստուգումների ընթացքում ստուգվում են միայն բողոքարկվող գործունեությանն առնչվող հարցերը:

5. Եթե թիկնապահի կամ պահնորդի գործունեությունը ստուգելուց հետո նրան տրվել է ժամկետ՝ խախտումները վերացնելու համար, ապա նշված ժամկետի ավարտից հետո մեկ տարվա ընթացքում կարող է իրականացվել տվյալ թիկնապահի կամ պահնորդի գործունեության ընթացիկ ստուգում:

6. Ստուգումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանապետի կամ թիկնապահական եւ պահնորդական գործունեության բնագավառը համակարգող պաշտոնատար անձի հանձնարարականի համաձայն, որտեղ նշվում են թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության անվանումը, թիկնապահի եւ պահնորդի անունը, ազգանունը, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, ստուգման հարցերը, ստուգման նպատակը, ժամկետը եւ ընդգրկվող ժամանակաշրջանը: Հանձնարարականի մեջ չնշված պաշտոնատար անձինք իրավունք չունեն մասնակցել ստուգմանը: Ստուգումն իրականացնող պաշտոնատար անձին այլ անձով փոխարինելը կատարվում է հանձնարարականի մեջ փոփոխություն կատարելու միջոցով, որի մասին ծանուցվում է թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությանը:

7. Հանձնարարականի երկու օրինակները, ստուգումն սկսելուց տասն օր առաջ տրվում է ստուգվող թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությանը, որը պարտավոր է ստորագրել մեկ օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված է ստուգման անցկացման մասին: Ստորագրված օրինակը վերադարձվում է ստուգումն իրականացնող պաշտոնատար անձին: Ստուգման ժամկետը սահմանվում է մինչեւ տասն աշխատանքային օր, որը ստուգման ընթացքում կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան հինգ աշխատանքային օրով՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանապետի կամ թիկնապահական եւ պահնորդական գործունեության բնագավառը համակարգող պաշտոնատար անձի հանձնարարականով:

8. Ստուգման արդյունքներով կազմվում է արձանագրություն, որում նշվում են արձանագրությունը կազմելու ամսաթիվն ու տեղը, ստուգվող թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը, թիկնապահի կամ պահնորդի անունը, ազգանունը, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, ստուգման հարցերը, ստուգման նպատակը, ժամկետը, ընդգրկվող ժամանակաշրջանը, ստուգման արդյունքները եւ այլ անհրաժեշտ տվյալներ: Եթե ստուգման ընթացքում հայտնաբերվել են խախտումներ, ապա արձանագրության մեջ պետք է նկարագրվի յուրաքանչյուր խախտում՝ նշելով խախտման էությունը, ինչպես նաեւ այն օրենքը կամ իրավական ակտը, որոնց պահանջները խախտվել են: Արձանագրությունը ստորագրվում է ստուգումն իրականացրած անձանց, թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության ներկայացուցչի, ինչպես նաեւ թիկնապահի կամ պահնորդի կողմից:

9. Ստուգման ավարտից հետո տասնօրյա ժամկետում ստուգում իրականացնող անձինք արձանագրության մեկական օրինակը պետք է հանձնեն թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությանը: Արձանագրության վերաբերյալ իրենց առարկությունները կամ միջնորդությունները թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է Հայաստանի Հանրապետության ոստիկանություն ներկայացնել այն ստանալուց հետո տասնօրյա ժամկետում: Եթե նշված ժամկետում

թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը չի ներկայացնում իր առարկությունները կամ միջնորդությունները, ապա համարվում է, որ թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը արձանագրության վերաբերյալ առարկություններ կամ միջնորդություններ չունի:

10. Թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության առաջարկությունները կամ միջնորդությունները քննարկվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում՝ դրանց ուղարկման համար սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված ժամկետն ավարտվելուց հետո տասնօրյա ժամկետում: Թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության առաջարկությունների կամ միջնորդությունների քննարկմանը մասնակից են դարձվում գործունեությունը ստուգող անձինք, թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության ներկայացուցիչը եւ թիկնապահը կամ պահնորդը:

ՀՈԴՎԱԾ. 27 ՍՏՈՒԳՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ստուգումն իրականացնող անձինք իրենց լիազորություններն իրականացնելիս իրավունք ունեն՝

- 1) անարգել մուտք գործել ստուգվող թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության գրասենյակ՝ տարածք.
- 2) թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության ղեկավարությունից պահանջել փաստաթղթեր, տվյալներ եւ այլ տեղեկություններ, բացատրություններ, տեղեկանքներ, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին.
- 3) անհրաժեշտության դեպքում ստուգումներին ներգրավել թիկնապահին կամ պահնորդին. ինչպես նաեւ համապատասխան մասնագետի.
- 4) վերցնել փաստաթղթերի բնօրինակներ, կամ դրանց կրկնօրինակներ, լուսապատճեններ, իրեր, փորձանմուշներ եւ այլ անհրաժեշտ նյութեր, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին եւ չեն խոչնդոտում թիկնապահի կամ պահնորդի բնականոն աշխատանքին:

2. Ստուգումն իրականացնող անձինք պարտավոր են՝

- 1) պահպանել սույն օրենքի պահանջները, այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջները.
- 2) չխոչընդոտել թիկնապահի կամ պահնորդի բնականոն աշխատանքին.
- 3) պատասխանել ստուգման հետ կապված թիկնապահի կամ պահնորդի հարցերին:

3. Ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթերի բնօրինակներ, իրեր, կամ այլ անհրաժեշտ նյութեր ժամանակավորապես վերցնելու դեպքում այդ մասին կազմվում է արձանագրություն, որում նշվում է նաեւ դրանց վերադարձման ժամկետը: Արձանագրության մեկ օրինակը հանձնվում է թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությանը:

4. Ստուգումն իրականացնող անձինք գույքային պատասխանատվություն են կրում ժամանակավորապես վերցրած փաստաթղթերի բնօրինակների, իրերի, կամ այլ անհրաժեշտ նյութերի որակական եւ քանակական ամբողջականության պահպանման ու սահմանված ժամկետում վերադարձման համար: Ստուգման ավարտից հետո, բայց ոչ ուշ մեկ ամսից, փաստաթղթերի բնօրինակները, իրերը եւ այլ անհրաժեշտ նյութերը վերադարձվում են թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությանը:

ՀՈՂՎԱԾ 28. ՍՏՈՒԳՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՄ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ, ԹԻԿՆԱՊԱՀԻ ԿԱՄ ՊԱՀՆՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Գործունեությունը ստուգելու ընթացքում թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության ներկայացուցիչը, թիկնապահը կամ պահնորդն իրավունք ունեն՝

1) ներկայացնել բացատրություններ, ապացույցներ, պարզաբանումներ, հարուցել միջնորդություններ, օրենքով սահմանված կարգով բողոքարկել ստուգումն իրականացնող անձանց գործողությունները.

2) չկատարել ստուգումն իրականացնող անձանց իրավասությունից, ինչպես նաեւ ստուգման նպատակներից եւ ծրագրից չբխող պահանջները.

3) ծանոթանալ ստուգման ընթացքում կազմված արձանագրություններին.

4) պահանջել ստուգումն իրականացնող անձանց ապօրինի գործողությունների հետեւանքով պատճառված վնասի հատուցում:

2. Գործունեությունը ստուգվող թիկնապահական կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության ներկայացուցիչը, թիկնապահը կամ պահնորդը պարտավոր է՝

1) չխոչընդոտել ստուգումների ընթացքին, կատարել ստուգումն իրականացնող անձանց օրինական պահանջները.

2) ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի պահանջով ներկայացնել պահանջվող փաստաթղթերի բնօրինակները, ստուգողներին տրամադրել դրանց լուսապատճենները, կրկնօրինակները եւ այլ տեղեկություններ.

3) համապատասխան պայմաններ ստեղծել ստուգումն իրականացնող անձանց գործունեության համար.

4) սահմանված ժամկետում վերացնել ստուգման արձանագրության մեջ արձանագրված թերությունները եւ խախտումները՝ այդ մասին գրավոր հայտնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը:

ՀՈՂՎԱԾ 29. ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

Նախագիծ
Պ-1230՝-06.09.2011-ՊԱ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի «Գործունեության այլ բնագավառներ» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 18.14 -րդ կետով՝

18.14 Ոչ պետական պաշտպանության գործունեության ծառայություններ մատուցելու համար՝ տարեկան	բազային տուրքի 250-ապատիկի չափով
---	----------------------------------

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

Նախագիծ
Պ-1230՝-06.09.2011-ՊԱ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի «Գործունեության այլ բնագավառներ» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 11-րդ կետով՝

11 Ոչ պետական պաշտպանության գործունեության ԿՄ Բ - - - - - - - - - - Ե

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

«Ոչ պետական պաշտպանության գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Պետական տուրքի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը պայմանավորված է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց ոչ պետական պաշտպանության գործունեության կազմակերպման անհրաժեշտությամբ՝ նկատի ունենալով, որ օրենսդրական կարգավորման բացակայությունը հնարավորություն չի տալիս պատշաճ հսկողություն սահմանել, ներկայումս՝ ներառյալ զենքի օգտագործմամբ իրականացվող, այդպիսի գործունեության նկատմամբ, ինչը գործնականում հանգեցնում է որոշակի բացասական դրսեւորումների:

Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի ոչ պետական պաշտպանության իրականացման գործընթացը կարգավորող օրենքի նախագծի ընդունումը կնպաստի իրավակարգի պահպանության եւ հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը, հնարավորություն կընձեռի իրավական կարգավորման ենթարկել թիկնապահական եւ պահնորդական գործունեությունը, անհրաժեշտ երաշխիքներ կստեղծի դրա իրականացման գործընթացում օրինականության ապահովման համար:

Ներկայացվող օրենքի նախագծերի փաթեթը նպատակ ունի թիկնապահական եւ պահնորդական գործունեության ոլորտում ապահովել միասնական պետական քաղաքականություն, օրենքով ամրագրել թիկնապահական եւ պահնորդական գործունեության իրավական հիմքերը, սկզբունքները, խնդիրները, պաշտպանվող յուրաքանչյուր անձին ուղեկցելու տրանսպորտային միջոցների եւ թիկնապահների քանակը, լիցենզավորման, զենք, հատուկ կամ տեխնիկական միջոցներ ձեռք բերելու եւ պետական այլ մարմինների հետ համագործակցության կարգը, ինչպես նաեւ կարգավորել այդ գործունեության իրականացման ընթացքում առաջացած հարաբերությունները:

Նախագիծը մշակելիս ուսումնասիրվել է մի շարք երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության, Էստոնիայի, Լատվիայի, Ղազախստանի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Դանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Շվեյցարիայի, Նոր Զելանդիայի եւ Կանադայի «Պետական պահպանության մասին», «Պահպանության ծառայության մասին» կամ «Պահպանության գործունեության մասին» վերտառությամբ օրենքները, ինչպես նաեւ ԱՊՀ երկրների միջպառլամենտական վեհաժողովի 2003 թականի հունիսի 13-ի որոշմամբ հաստատված եւ ազգային օրենսդրությունում օգտագործելու նպատակով ԱՊՀ անդամ երկրների պառլամենտներին ուղարկված «Ոչ պետական (մասնավոր) պահպանության գործունեության եւ ոչ պետական (մասնավոր) խուզարկուի գործունեության մասին» մոդելային օրենքը:

Նախագծի վերաբերյալ գրավոր առարկություններ եւ առաջարկություններ է ներկայացրել ՀՀ ոստիկանությունը, որոնք գտնվում են քննարկման փուլում:

Մեր կարծիքով, ներկայացված նախագիծն առաջադիմական բնույթ է կրում, քանի որ այս փաստաթղթով մտցվում է նոր ինստիտուտ, որը կօգնի թիկնապահական եւ պահնորդական ծառայությունների քաղաքակիրթ շուկայի զարգացմանը, մասնավորապես՝ հնարավորություն կտրվի ապահովագրել պրոֆեսիոնալ դիսկեր՝ ինչպես թիկնապահների ու պահնորդների, այնպես էլ հաճախորդների համար: